# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 5

Երեք ՀԷԿ-երի հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգի իրականացման աշխատանքների ձեռքբերման 01/19 ծածկագրով մրցույթի նիստի

20.06.2019

Մասնակցում էին Կ. Մելիքյան, Ա. Մելքումյան, Թ. Դաեեբաշվիլի, Ա. Քոչարյան, Ն. Զալյան

Հրավիրված էին Ա. Հովսեփյան, Ա. Յոլյան, Ա. Հարությունյան

Օրակարգում. 1. Մրցույթում հաղթող ճանաչված <<ՆԻԿՕ-ՏԵԿ>> ՍՊԸ-ի գրության քննարկումը:

Հաշվի առնելով, որ <<ՆԻԿՕ-ՏԵԿ>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվող հրդեհի ազդարարման համակարգերի խմբերը իրենց տեխնիկական չափորոշիչներով և լուծումներով որոշակիորեն տարբերվում են մրցութային փաթեթում և նախագծում մատնանշված սարքավորումների տեխնիկական բնութագրից

Որոշվեց 1.Մերժել <<ՆԻԿՕ-ՏԵԿ>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվող հրդեհի ազդարարման համակարգերի տեխնիկական լուծումները և ապրանքախմբերը:

2. Չեղարկել 01/19 ծածկագրով << Երեք ՀԷԿ-երի Հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգի իրականացում >> մրցույթը, քանի որ խախտվել է ՀԾԿՀ-ի 2017թ-ի սեպտեմբերի 13-ի որոշմամբ հաստատված հանրային կազմակերպությունների գնումների կարգի նկատմամբ լրացուցիչ պահանջների հավելվածի 6-րդ կետի 5-րդ ենթակետը, մասնավորապես տեխնիկական բնութագրում և նախագծում առկա է կոնկրետ ապրանքատեսակների և մոդելների հղումներ, տեխնիկական տվյալները, պարամետրերը չունեն միջակայքեր:

3. Մրցույթի տեխնիկական բնութագիրը լրամշակելու նպատակով վերադարձնել հայտատու ստորաբաժանմանը:

4. Առաջարկել հայտատու ստորաբաժանմանը տեխնիկական բնութագրում բացառել հղումները որևէ ապրանքատեսակի կամ մոդելի, իսկ պահանջվող տեխնիկական տվյալները, պարամետրերը նշել որոշակի հնարավոր միջակայքերով, որը կընդլայնի մրցույթի մասնակիցների շրջանակը և կխրախուսի մրցակցությունը:

Ընդունվել է որոշում 5 կողմ՝ 0 դեմ

Հանձնաժողովի անդամներ Կ. Մելիքյան

Ա. Մելքումյան

Թ. Դատեբաշվիլի

Ա. Քոչարյան

Ն. Զալյան

Արձանագրի քարտուղար Է. Մուղումյան